ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

---

**ք. Տաշիր** **11/14/2025**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14
# ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 14 անդամներ:

Բացակա էին՝ Վահե Անախասյանը, Կարեն Բաղդասարյանը, Տաթեվիկ Գասպարյանը, Վիգեն Գրիգորյանը, Հայկ Մարդոյանը, Էդուարդ Սողոյանը, Վահան Ստեփանյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**
Աստղիկ Բարոյան, Սամվել Շահբազյան

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Էդգար Արշակյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Նունե Սոլոյանը**

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐԵՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 14-
հերթական նիստի օրակարգը՝
1. Տաշիր համայնքի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ռազմավարական պլանը հաստատելու մասին,
2. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի համար
3 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեությունը այլ հասցեում իրականացնելու մասին, 3. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի համար 2 նախադպրոցական ուսումնական

հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը լուծարելու, լուծարման հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի կազմը հաստատելու մասին,
4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 25-ի N 52-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին,
5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N27-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,
6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի Տաշիր քաղաքի Տաշիր-Գյումրի մայրուղի 55 անասնապահական համալիր հասցեում գործունեություն ծավալող խոզաբուծական համալիրի ընդլայնումների աշխատանքներին անհամաձայնություն տալու մասին,
7. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

***Քվեարկության արդյունքները.***

| Կողմ -14 | Դեմ -0 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ն. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Ջ. ՊՈՂՈՍՅԱՆ
Գ. ՋԱՎՈՒԿՑՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ի. ՏՈՄԵՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 99-Ա)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՇՏ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՍՏՂԻԿ ԲԱՐՈՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4.4 հոդվածի 1-ին մասով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Տաշիր համայնքի կոշտ կենցաղային թափոնների կառավարաման ռազմավարական պլանը՝ համաձայն հավելվածի:

***Քվեարկության արդյունքները.***

| Կողմ -10 | Դեմ -0 | Ձեռնպահ -4 |
|---|---|---|
| Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ | | Ն. ԽԱՉԱՏՐՅԱՆ |
| Է. ԱՐՇԱԿՅԱՆ | | Ջ. ՊՈՂՈՍՅԱՆ |
| Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | | Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ | | Ի. ՏՈՄԵՅԱՆ |
| Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ | | |
| Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ | | |
| Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ | | |
| Գ. ՋԱՎՈՒԿՑՅԱՆ | | |
| Ա. ՍՈԼՈՅԱՆ | | |
| Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ | | |

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 100-Ա)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ 3 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԼ ՀԱՍՑԵՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՆԱԻՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով այն, որ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի համար 3 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տիպային շենքի կառուցման սուբվենցիոն ծրագրով իրականացվում է նոր շենքի կառուցում և նախադպրոցական ուսումնական հաստատության իր գործունեությունը հնարավոր չէ իրականացնել կանոնադրությամբ սահմանված գործեության հասցեում

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Մինչև շինարական աշխատանքների ավարտը՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի համար 3 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեությունը իրականացնել ՀՀ Լոռու մարզ, ք. Տաշիր, Խանջյան փողոց, թիվ 3/1 հասցեում:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ն. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Ջ. ՊՈՂՈՍՅԱՆ
Գ. ՋԱՎՈՒԿՑՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ի. ՏՈՄԵՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 101-Ա)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ 2 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ)***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 68-րդ, 69-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, 13-րդ հոդվածի զ) կետով, 25-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով այն, որ «ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի համար 2 նախադպրոցական ուսումնական հատատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը փաստացի չի գործում 2014 թվականի մարտ ամսից՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել «Հայաստանի Հանրապետության Տաշիր համայնքի համար 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը:
2.Ստեղծել լուծարման հանձնաժողով հետևյալ կազմով ՝
1) Նորայր Մարգարի Բաղդասարյան ՝ Տաշիր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, հանձնաժողովի նախագահ,
2) Տաթևիկ Անաստասի Գասպարյան՝ Տաշիրի համայնքի ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ,
3)Արթուր Նորիկի Պողոսյան ՝ Տաշիր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, հանձնաժողովի անդամ ,
4)Նունե Սոկրատի Սոլոյան ՝ Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար, հանձնաժողովի անդամ
5)Նաթելլա Գուրգենի Մուրադյան ՝ Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հավաքագրման և հաշվառման բաժնի պետ, հանձնաժողովի անդամ
6) Արմեն Սուրենի Դիլբարյան՝ Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հավաքագրման և հաշվառման բաժնի պետի տեղակալ, հանձնաժողվի անդամ ,
7) Ասյա Պարգևի Հարությունյան ՝ Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության և առողջապահության, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ, հանձնաժողվի անդամ,
8) Նաիրա Կնյազի Սարգսյան ՝ Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության և առողջապահության, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար, հանձնաժողվի անդամ,
9) Արման Աբրահամի Վարդանյան ՝ Տաշիր համայնքի ավագանու անդամ, հանձնաժողվի անդամ,
3. «Հայաստանի Հանրապետության Տաշիր համայնքի համար 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետ սահմանել 2026 թվականի հունվարի 19-ը :
4. Սահմանել լուծարման կարգը ՝ համաձայն հավելվածի:
5. Լուծարման հանձնաժողովին ՝ http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում զետեղել հայտարարություն «Հայաստանի Հանրապետության Տաշիր համայնքի համար 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի ու ժամկետի մասին:
6. Դիմել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում «Հայաստանի Հանրապետության Տաշիր համայնքի համար 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկություններ գրառելու նպատակով:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ն. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Ջ. ՊՈՂՈՍՅԱՆ
Գ. ՋԱՎՈՒԿՑՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ի. ՏՈՄԵՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 102-Ա)*

---

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի N 52-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 37-րդ հոդվածով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությունը հանդիսացող տարածքը անհատույց

օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» N 52-Ա որոշումը:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -4

| Կողմ | Ձեռնպահ |
|---|---|
| Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ | Ն. ԽԱՉԱՏՐՅԱՆ |
| Է. ԱՐՇԱԿՅԱՆ | Ջ. ՊՈՂՈՍՅԱՆ |

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Գ. ՋԱՎՈՒԿՑՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ի. ՏՈՄԵՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 103-Ա)*

---

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N27-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին » Հայստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2022 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի քաղաքական, վարչական, հայեցողական պաշտոնների և «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի աշխատողների կառուցվածքը, քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 28-ի N10-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N27-Ա որշման N2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը՝ 1) «Տեխնիկական սպասարկում

իրականացնող անձնակազմ » բաժնի 1-ին կետում « 1. Հավաքարար 9 » բառերը փոխարինել « 1. Հավաքարար 10 » բառերով:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ

Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ն. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Ջ. ՊՈՂՈՍՅԱՆ
Գ. ՋԱՎՈՒԿՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ի. ՏՈՄԵՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 104-Ա)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՇԻՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՇԻՐ-ԳՅՈՒՄՐԻ ՄԱՅՐՈՒՂԻ 55 ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼՈՂ ԽՈԶԱԲՈՒԾԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՍԱՄՎԵԼ ՇԱՀԲԱԶՅԱՆ)***

Ղեկավարվելով « Շրջական միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հնարապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման 28-րդ կետը և 03.10.2025-ի «Բոզոյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի Տաշիր քաղաքի Տաշիր-Գյումրի մայրուղի 55 անասնապահական համալիր հասցեում գործունեություն ծավալող խոզաբուծական համալիրի ընդլայնման աշխատանքերի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկման արձանագրությունը

Տաշիր համայնքի ավագանին որոշում է

1. Տալ անհամաձայնություն Բոզոյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի Տաշիր քաղաքի Տաշիր-Գյումրի մայրուղի 55 անասնապահական համալիր հասցեում գործունեություն ծավալող խոզաբուծական համալիրի ընդլայնման աշխատանքների իրականացմանը:

***Քվեարկության արդյունքները.***

| Կողմ -10 | Դեմ -3 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|
| Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ | Ն. ԽԱՉԱՏՐՅԱՆ | |
| Է. ԱՐՇԱԿՅԱՆ | Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ | |
| Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | Ի. ՏՈՄԵՅԱՆ | |
| Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ | | |
| Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ | | |
| Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ | | |
| Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ | | |
| Գ. ՋԱՎՈՒԿՅԱՆ | | |
| Ա. ՍՈԼՈՅԱՆ | | |
| Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ | | |

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 105-Ա)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով `

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի դեկտեմբերի 24-ը, ժամը՝ 14:30-ին:

***Քվեարկության արդյունքները.***

| Կողմ -14 | Դեմ -0 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|
| Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ | | |
| Է. ԱՐՇԱԿՅԱՆ | | |
| Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | | |
| Ն. ԽԱՉԱՏՐՅԱՆ | | |
| Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ | | |
| Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ | | |
| Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ | | |

Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Ջ. ՊՈՂՈՍՅԱՆ
Գ. ՋԱՎՈՒԿՑՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ի. ՏՈՄԵՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 106-Ա)*

---

Ավագանու անդամներ

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ն. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Վ.  ՅՈՒՍՈՒԲՈՎ

Ջ. ՊՈՂՈՍՅԱՆ

Գ.ՋԱՎՈՒԿՑՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ

Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ի.  ՏՈՄԵՅԱՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*

ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ_________________

*Նիստն արձանագրեց*՝ Նունե Սոլոյանը ___________________________________